

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 22/14

ք.Երևան

20 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը հայտնում է, որ զբաղվում է մանրածախ առևտրով Առինջ տոնավաճառում: Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը հունվարի 20-ին 4-րդ եռամսյակի հաշվետվության հետ փորձել է ներկայացնել նաև շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն քանի որ հարկային համակարգում փոփոխություններ էին լինելու, նշված հայտարարությունը չի ընդունվել: Այնուհետև, Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանն ունեցել է առողջական խնդիրներ, ինչպես նաև մոտ ազգականի կորուստ, ուստի չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Արդյունքում Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը ստացել է ծանուցագիր ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ: Սակայն, քանի որ Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը չունի հնարավորություն ԱԱՀ-ի հարկման դաշտում գործունեություն իրականացնելու համար, ուստի խնդրում է թույլ տալ համարվել շրջանառության հարկ վճարող:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 02.07.2013թ.:

Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ սահմանված կարգով ծանուցվել է 03.02.2015թ.:

Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանը 2017թ. հանդիսացել շրջանառության հարկ վճարող և իրացման շրջանառությունը կազմել է 5.454.906 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նորարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ

հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ սահմանված կարգով հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Մինևույն ժամանակ ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Ռուզաննա Զաքարյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ